



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2022 թվական N 788-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 25-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2022 թվականի սեպտեմբերի 19-ի N 01/14/05624-2022 գրությունը, անշարժ գույքի սեփականության իրավունքի N28072022-04-0005 վկայականը և «Ֆրստ Քոնսթրաքշն Քոմփանի» ՍՊԸ-ի տնօրեն Արման Այվազյանի 2022 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Հայկաշեն գյուղում գտնվող /04-056-0334-0002/ ծածկագրով, «Ֆրստ Քոնսթրաքշն Քոմփանի» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրված գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.71337 հա մակերեսով այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրվող հողերի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն՝ սույն 0.71337 հա մակերեսով հողամասը հանել գյուղատնտեսական նշանակության այլ հողերի հաշվեկշռից և ներառել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրվող հողերի հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093) 554477

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2022 թվական N 789-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 25-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի N 01/14/05985-2022 գրությունը, անշարժ գույքի սեփականության իրավունքի N 28072022-04-0009 վկայականը և «Ֆրստ Քոնսթրաքշն Քոմփանի» ՍՊԸ-ի տնօրեն Արման Այվազյանի 2022 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող Հայկաշեն գյուղում գտնվող /04-056-0335-0010/ ծածկագրով, «Ֆրստ Քոնսթրաքշն Քոմփանի» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրված գյուղատնտեսական նպատակային նշանակության 6.52837 հա մակերեսով այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրվող հողերի:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն՝ սույն 6.52837 հա մակերեսով հողամասը հանել գյուղատնտեսական նշանակության այլ հողերի հաշվեկշռից և ներառել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրվող հողերի հաշվեկշռում:
- Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, Գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2022 թվականի N 790-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով անշարժ գույքի չափագրման / <<Ավագ Ավագյան Գագիկի>> Ա/Ձ-ի ,վկայական N0331, 30.08.2022 թվականի/ տվյալները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-033-0078-0020 և 04-033-0078-0003 ծածկագրով հողամասերի միավորումից առաջացած գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Գայ, Ա.Խաչատրյան փողոց, 3 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 11

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araq.s.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հոկտեմբերի 2022 թվական N 791-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ և 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի Թումանյան փողացի 6 բնակելի տան բնակիչ Մարինե Աշոտի Աբգարյանի /Անձնագիր՝ AS0506947, տրված 12.02.2019թ.-ին 057-ի կողմից/ 2022 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 11-ի N5 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Մարինե Աշոտի Աբգարյանին հանդես գալ իր անչափահաս որդու՝ Ռոբերտ Մինասի Սամվելյանի /ծնված՝ 06.11.2011թ., վկայական՝ N 160488/ անունից՝ իրենց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի Թումանյան փողոցի 6 բնակելի տունը գրավ դնելու գործընթացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2022 թվական N 792-Ա

ՕԳՍԵՆ ՆՇԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Գայ գյուղի բնակիչ Օգսեն Նշանի Նազարյանի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի բնակիչ Օգսեն Նշանի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող /04-033-0080-0009/ ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված 160.0 քմ արտաքին մակերեսով երկհարկանի բնակելի տունը՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 202249NLQZ:
- Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի տան 1քմ համար 1422 ՀՀ դրամ.
 $1422 \times 160.0 \text{ քմ} = 227520$ /երկու հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր քսան/ ՀՀ դրամ:

3. Ինքնական կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 227520 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Գայ գյուղի N 900325165158 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հոկտեմբերի 2022 թվականի N 793-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿԵՄԲԵՐԻ 23-Ի N54 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի բնակիչ Համլետ Տիգրանի Սաֆարյանը /ծնվ.1952թ./ դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Մեծամոր գյուղի Մ. Սարյան փողոցի 9 հասցեում գտնվող, իրենց պատկանող /ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 18.03.1991թ. թիվ5 որոշման և ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 07.09.2017թ-ի թիվ5098 սեղանամատյանի/ 0.2241հա օրինական հողամասի, որից 0.00064հա ընդհանուր համատեղ սեփականության և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի Մ. Սարյան փողոցի 9 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Համլետ Տիգրանի Սաֆարյանի /ծնվ.1952թ./, Ֆլորա Աղվանի Սաֆարյանի /ծնվ.1958թ./, Սուսաննա

Համլետի Սաֆարյանի /ծնվ.1978թ./ Արմինե Համլետի Սաֆարյանի /ծնվ.1980թ./ Կարինե Համլետի Սաֆարյանի /ծնվ.1981թ./ Հովիկ Համլետի Սաֆարյանի /ծնվ.1988թ./գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.2241հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 172.6քմ կառուցված 1988թ, բնակելի տուն՝ 156.2քմ կառուցված 1988թ., բնակելի տուն՝ 73.6քմ կառուցված 1963թ, ծածկ՝ 48.3քմ կառուցված 2019թ, զուգարան՝ 2.3քմ կառուցված 1999թ./: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթական են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Համլետ Տիգրանի Սաֆարյանի /ծնվ.1952թ./, Ֆլորա Աղվանի Սաֆարյանի /ծնվ.1958թ./, Սուսաննա Համլետի Սաֆարյանի /ծնվ.1978թ./ Արմինե Համլետի Սաֆարյանի /ծնվ.1980թ./ Կարինե Համլետի Սաֆարյանի /ծնվ.1981թ./ Հովիկ Համլետի Սաֆարյանի /ծնվ.1988թ./սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Մեծամոր Մ. Սարյան փողոց թիվ 9 հասցեն:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի «Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N54 որոշումը:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2022 թվական N 794-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 790-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի <<Անշարժ գույքի միավորման և հասցեավորման մասին>> N 790-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 12
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբեր 2022 թվականի N 795-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-017-0035-0044 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Արաքս, Բարեկամության 56 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա.Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հոկտեմբերի 2022 թվականի 796-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-033-0078-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Գայ, Ա.Խսահակյան փողոց, 3/1 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբեր 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2022 թվական N 797-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Անուշ Պատվականի Ղազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը **պարզեցի՝**

Արաքս համայնքի Արաքս գյուղի օպերատորի կողմից 25.05.2022թ.-ին տրված տեղեկանքը հավաստում է, որ քաղաքացի Անուշ Պատվականի Ղազարյանը (հասցե՝ ք. Երևան, Արաբիր, Մանուշյան փողոց 86) հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2022 թվականի օգոստոսի 17-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Անուշ Պատվականի Ղազարյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին (հիմք՝ 17.08.2022 թվականի անդորրագիր՝ LO105233615AM), սակայն ծանուցագիրը վերադարձվել է «չպահանջված» գրառմամբ, որին 29.10.2022թ. հաջորդել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով սահմանված կարգով

վարչական վարույթի հարուցման մասին ծանուցման տեղադրումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Անուշ Պատվականի Ղազարյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցելուց հետո վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, ուստի վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքահարկի «e-community» միասնական համակարգից ձեռք բերված տվյալները՝ Անուշ Պատվականի Ղազարյանը չի կատարել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող, համաձայն Կադաստրի կոմիտեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքերի մասով հարկային պարտավորությունները, որի հետևանքով 25.05.2022 թվականի դրությամբ գոյացել է 1,063,990 (մեկ միլիոն վաթսուներեք հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ պարտք, որից՝

1. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0126-0007 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 235,465 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 227,837 (երկու հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 7,628 (յոթ հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամը 2021թ.-ի

հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

2. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0171-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 226,461 (երկու հարյուր քսանվեց հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, որից 219,125 (երկու հարյուր տասնինը հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը 2021, 2022 թթ.-ի ապառքի գումար և 7,336 (յոթ հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

3. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0171-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 59,947 (հիսունինը հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, որից 58,005 (հիսունութ հազար հինգ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 1,942 (հազար ինը հարյուր քառասուներկու) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

4. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0125-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 350,079 (երեք հարյուր հիսուն հազար յոթանասունինը) ՀՀ դրամ, որից 338,739 (երեք հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամը 2021, 2022 թթ.-ի ապառքի գումար և 11,340 (տասնմեկ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

5. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0170-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 192,038 (հարյուր իննսուն երկու հազար երեսունութ) ՀՀ դրամ, որից 185,817 (հարյուր ութսուն հինգ հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 6,221

(վեց հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնցից է անշարժ գույքի հարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններ և ֆիզիկական անձինք...: Օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում

Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը:

Օրենսգրքի 229-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի հարկի դրույքաչափերը, որը 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 15 տոկոս:

Օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար անշարժ գույքի հարկը հաշվարկվում է դրա հաշվարկային զուտ եկամտի և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափի արտադրյալի չափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ...:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

ՀՀ հարկային օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային իրավախախտման համար որպես հարկային պատասխանատվության միջոց կարող է կիրառվել տույժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

14.05.2021 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (համար՝ ՀՕ-220-Ն) 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասում «0.075» թիվը փոխարինվել է «0.04» թվով: Իսկ նույն օրենքի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 224-րդ, 225-րդ, 227-րդ, 233-րդ, 236-րդ և 397-րդ հոդվածների 1-ին, 228-րդ հոդվածի 2-րդ մասերով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 226-րդ և 400-րդ հոդվածների 1-ին մասի 2-րդ կետերով, 229-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 401-րդ հոդվածով, 2020 թվականի ապրիլի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետերով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Անուշ Պատվականի Ղազարյանից հոգուտ Արաքս համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 1,063,990 (մեկ միլիոն վաթսուներեք հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ պարտք, որից՝ հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0126-0007 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 235,465 (երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 227,837 (երկու հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամը 2021, 2022 թթ.-ի ապառքի գումար և 7,628 (յոթ հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0171-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 226,461 (երկու հարյուր քսանվեց հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, որից 219,125 (երկու հարյուր տասնինը հազար հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 7,336 (յոթ հազար երեք հարյուր երեսունվեց) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0171-0002

կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 59,947 (հիսունինը հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, որից 58,005 (հիսունութ հազար հինգ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 1,942 (հազար ինը հարյուր քառասուներկու) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0125-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 350,079 (երեք հարյուր հիսուն հազար յոթանասունինը) ՀՀ դրամ, որից 338,739 (երեք հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 11,340 (տասնմեկ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-017-0170-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 192,038 (հարյուր իննսուն երկու հազար երեսունութ) ՀՀ դրամ, որից 185,817 (հարյուր ութսուն հինգ հազար ութ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 6,221 (վեց հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

2. Հարկային պարտավորությունների վճարումը կատարել Արաքս համայնքի Արաքս գյուղի 900325006063 հաշվեհամարին: Ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Արաքս համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 13

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

13 հոկտեմբերի 2022 թվական N 798-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԿՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Աշոտ Ավետիքի Կարեյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը **պարզեցի՝**

Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի օպերատորի կողմից 25.05.2022թ.-ին տրված տեղեկանքը հավաստում է, որ քաղաքացի Աշոտ Ավետիքի Կարեյանը (հասցե՝ ք. Երևան, Դավիթաշեն, 3-րդ թաղամաս, 17 շենք, 31բ.) հանդիսանալով անշարժ գույքի հարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով (01.01.2021 թվականին ուժը կորցրել է), «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (01.01.2018 թվականին ուժը կորցրել է) և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2022 թվականի օգոստոսի 176-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Հավելենք նաև, որ Աշոտ Ավետիքի Կարեյանը դեռևս 2022 թվականի հուլիսի 11-ին նախազգուշացվել է համայնքի առջև առկա չկատարված հարկային պարտավորությունների և դրանք չկատարելու դեպքում վարչական վարույթի հարուցման մասին (հիմք՝ 12.07.2022 թվականի LO104708294AM անդորրագիր՝ ուղղարկված հաշվառման վայրի հասցեով):

Աշոտ Ավետիքի Կարեյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին (հիմք՝ 17.08.2022 թվականի անդորրագիր՝ (LO105223266AM), սակայն ծանուցագիրը վերադարձվել է «չպահանջված» գրառմամբ, որին 29.10.2022թ. հաջորդել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ մասերով սահմանված կարգով

վարչական վարույթի հարուցման մասին ծանուցման տեղադրումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Աշոտ Ավետիքի Կարեյանին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով պատշաճ կերպով ծանուցելուց հետո վերջինիս կողմից չի ներկայացվել պնդում լուծման անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լուծման անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համարգ հանդիսացող «Վեկտոր պլուս» ծրագրից և գույքահարկի «e-community» միասնական համակարգից ձեռք բերված տվյալները՝ Աշոտ Ավետիքի Կարեյանը չի կատարել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող, համաձայն Կադաստրի կոմիտեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքերի մասով հարկային պարտավորությունները, որի հետևանքով 25.05.2022 թվականի դրությամբ գոյացել է 876,552 (ութ հարյուր յոթանասունվեց հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ պարտք, որից՝

1. Հողի հարկի, իսկ 2021թ.-ից անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0242 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ (2021թ.-ից բնակելի կառուցապատման համար նախատեսված) հողամասի մասով 21,191 (քսանմեկ հազար հարյուր ինսունմեկ) ՀՀ դրամ, որից 11,808 (տասնմեկ հազար ութ հարյուր ութ) ՀՀ դրամը 2012, 2014-2020թթ.-ի ապառքի գումար և 5,225 (հինգ հազար երկու հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը 2012, 2014-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 4,030 (չորս հազար երեսուն) ՀՀ դրամ 2021, 2022թ.-ի ապառքի գումար և 128 (հարյուր քսանութ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

2. Հողի հարկի, իսկ 2021թ.-ից անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0247, 04-035-0154-0249, 04-035-0154-0243, 04-035-0154-0248, 04-035-0154-0245, 04-035-0154-0246, 04-035-0154-0244 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակությամբ (2021թ.-ից բնակելի կառուցապատման համար նախատեսված)

ողղամասերի համար յուրաքանչյուրի մասով 21,239 (քսանմեկ հազար երկու հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, որից 11,808 (տասնմեկ հազար ութ հարյուր ութ) ՀՀ դրամը 2012, 2014-2020թթ.-ի ապառքի գումար և 5,273 (հինգ հազար երկու հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամը 2012-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 4,030 (չորս հազար երեսուն) ՀՀ դրամ 2021, 2022թ.-ի ապառքի գումար և 128 (հարյուր քսանութ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ: Ընդհանուր 148,673 (հարյուր քառասունութ հազար վեց հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ:

3. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0236 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով՝ 211,109 (երկու հարյուր տասնմեկ հազար հարյուր ինը) ՀՀ դրամ, որից 144,904 (հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր չորս) ՀՀ դրամը 2012, 2014-2020թթ.-ի ապառքի գումար և 64,704 (վաթսունչորս հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամը 2012-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 1,450 (հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2021, 2022թ.-ի ապառքի գումար և 51 (հիսունմեկ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

4. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0061 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 112,917 (հարյուր տասներկու հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, որից 66,216 (վաթսուն վեց հազար երկու հարյուր տասնվեց) ՀՀ դրամը 2012, 2014-2020թթ.-ի ապառքի գումար և 29,568 (քսանինը հազար վեց հարյուր հիսունութ) ՀՀ դրամը 2012-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 16,554 (տասնվեց հազար հինգ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը 2021, 2022 ապառքի գումար և 579 (հինգ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

5. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0208 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությամբ ջրովի վարելահողի մասով 29,871 (քսանինը հազար ութ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից 18,657 (տասնութ հազար վեց հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամը 2012-2020թթ.-ի ապառքի գումար և 10,007 (տասը հազար յոթ) ՀՀ դրամը 2012-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր և 1,166 (հազար հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 41 (քառասունմեկ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

6. Անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0062 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով 48,090 (քառասունութ հազար իննսուն)

ՀՀ դրամ, որից 46,607 (քառասունվեց հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամը 2021, 2022թ.-ապառքի գումար և 1,483 (հազար չորս հարյուր ութսուներեք) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

7. Անշարժ գույքի հարկային պատրավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0064 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով 128,643 (հարյուր քսանութ հազար վեց հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, որից 124,676 (հարյուր քսանչորս հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 3,967 (երեք հազար ինը հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

8. Անշարժ գույքի հարկային պատրավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0063 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով 79,843 (յոթանասունինը հազար ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, որից 77,381 (յոթանասունյոթ հազար երեք հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 2,462 (երկու հազար չորս հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

9. Անշարժ գույքի հարկային պատրավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0065-001 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով 74,884 (յոթանասուն չորս հազար ութ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, որից 72,575 (յոթանասուններկու հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 2,309 (երկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

10. Անշարժ գույքի հարկային պատրավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղում գտնվող 04-035-0154-0059 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով 21,331 (քսանմեկ հազար երեք հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ, որից 20,673 (քսան հազար վեց հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամը 2021, 2022թթ.-ի ապառքի գումար և 658 ՀՀ դրամը 2021թ.-ի հարկային պարտավորությունը ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տեղական հարկի տեսակներն են՝ գույքահարկը, հողի հարկը, ...:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.4-րդ հոդվածը սահմանում է՝ տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման

մարմինների կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններն են:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գնովնելու վայրի համայնքի բյուջե:

ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնցից է անշարժ գույքի հարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...: Օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնահատված՝ հողամասերի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար անշարժ գույքի հարկով հարկման բազա է համարվում Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամուտը:

Օրենսգրքի 229-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի հարկի դրույքաչափերը, որը 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը

կազմում է 15 տոկոս, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ առանց բարելավումների (այդ թվում՝ միայն պարսպով բարելավված) ոչ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար, որոնք բնակավայրերի հողերից բնակելի կառուցապատման համար նախատեսված հողեր են՝ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 0,6 %, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի համար անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 0.25 տոկոս:

Օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հաշվարկվում է անշարժ գույքի՝ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի (արժեքների) և Օրենսգրքի 229-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները: Գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար անշարժ գույքի հարկը հաշվարկվում է դրա հաշվարկային զուտ եկամտի և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափի արտադրյալի չափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ...:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

ՀՀ հարկային օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային իրավախախտման համար որպես հարկային պատասխանատվության միջոց կարող է կիրառվել տույժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

